# ՏԵՂ

Գտնվում էր Հաբանդ գավառի մեջ, համաձայն Ստ․ Օրբելյանի ցուցակի, վճարում էր 12 չափ տուրք, որով միջակ մեծության գյուղերի շարքում էր։

Համաձայն պատմագրի հաղորդած տեղեկությունների, Տեղ գյուղը հիմնարկել է Սյունյաց թագուհի Շահանդուխտը և իր ամուսնու՝ Սյունյաց առաջին թագավոր Սմբատի մահվանից հետո նվիրում է Տաթևի վանքին, 998 թ.։ Այս վճիռը հետագայում ես հաստատվում է։

Պատմա-հնագիտական գրականության մեջ այս գյուղում գտնվող հուշարձանների մասին քիչ տեղեկություններ կան, իսկ արձանագրություններից միայն երեքն են հրատարակված, այն էլ միմիայն 18-րդ դարին վերաբերող։

Այս աշխատության մեջ բերված բազմաթիվ արձանագրությունները խոշոր չափով լրացնում են գյուղի մասին եղած տեղեկությունները և կարևոր նորություններ հաղորդում թե գյուղի և թե Սյունիքի պատմության համար։

Տեղ գյուղում այժմ կան հետևյալ հուշարձանները։

1. **Ս. Գևորգ եկեղեցի**. *գտնվում է գյուղամիջում. 14—15 դարերում շինված. պատերին եղած արձանագրություններից հնագույնը 1451 թվականի է և նորագույնը՝ 1827 թ.։*

2. **Մելիք Բարխուդարյանների «ամարաթը»**— *ապարանքը, գտնվում է գյուղամիջում, եկեղեցու մոտ հյուսիս-արևելքից. բաղկացած է մի քանի թաղակապ շինություններից, որոնցից մեծի բարավորի վրայի արձանագրությունը 1783 թ. է գրված։*

3. **Գերեզմանատուն**. *գտնվում է գյուղի հյուսիսային եզրին, շատ ընդարձակ է. կան բազմաթիվ խաչքարեր և գերեզմանաքարեր, հնագույն արձանագրությունը 1216 թվ. է. այդտեղ են թաղում մինչև օրս էլ։ Գերեզմանաքարերն առանձնապես հետաքրքիր են, որովհետև շատերի վրա կան քանդակված կենցաղային տեսարաններ, աշխատանքային գործիքներ, երաժշտական գործիքներ և այլն։*

4. **«ԱՌՆԵՂՑԻ» կամ «կոտրած եղցի»**. *փոքրիկ կիսավեր եկեղեցի, գտնվում է գյուղից մոտ չորս կիլոմետր դեպի հարավ-արևելք. քարաժայռի գլխին. շինված պետք է լինի գյուղի եկեղեցու շինության ժամանակներում. բակում գտնված մի խաչքարի վրա կա 1477 թ., արձանագրություն։*

5. **«Քարե օթաղ» կամ «քարե տուն»**. *այսպես են անվանում գյուղացիները գյուղամիջի եկեղեցու մոտ, հարավ արևելքից կանգուն մնացած, սրբատաշ քարերով շինված մի փոքր տուն։ Այս տունը բաղկացած է երկու իրար մեջ հաղորդվող սենյակներից. սենյակներից յուրաքանչյուրն ունի ոչ շատ մեծ լուսամուտներ և մի քանի հատ խորշեր—ակնատներ գեղեցիկ կերպով ձևավորված, նաև երկարավուն քարե դարակներ՝ տնային իրեր դնելու համար։ Շենքը դրսից և ներսից սրբատաշ քարով է շինված, ունի երկու մուտք, մեկն արևելքից, մյուսն արևմուտքից։ Արևելյան մուտքը ձևավորված է գեղեցիկ կամարով և երկու կողքերին ունի սրբատաշ քարից «նստարաններ»։*

Այս տունը նյութով և տեխնիկայով հար և նման է եկեղեցուն, հետևաբար 14—15 դարի շենք է։ Սա միջնադարյան բնակելի շենքի լավագույն մի նմուշ է. այժմ էլ կանգուն է և օգտագործվում է կոլխոզի կողմից՝ որպես կաթնամթերքի պահեստ։

**176. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևելյան պատի ամենաբարձր մասում։*




*Առնվազն երեք արձանագրության մասեր են, որոնք նորոգությունների ժամանակ շարվել են իրար կողքի։ Առաջին շարքում երեք մեծ քարեր են, իսկ երկրորդ շարքում երկու ավելի փոքր քարերի վրա, մեր գծագրած տեղադրությամբ։ Արձանագրությունը բարձր ու անմատչելի տեղում է և հողմահարված, գրել ենք հեռադիտակի օգնությամբ։*

**177. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևելյան պատի միակտուր նեղ պատուհանի շուրջը. 5 տ.*




ԱԲ[ՐՈՒՄ]ԵԴ ՍՈՒՐԲ | ԵԿԵՂԵՑՈՑՍ ԱՇԽԱ|ՏԱԻՈՐ, ՑԱՐԴԱ[Ր] ԱՂԱ[Ի]ԹՈ ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Արձանագրությունը վերաբերում է շինության ժամանակին։*

**178. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. արևելյան պատի հարավային բարձր մասում. 6 տ.*




ՆՈՐԻՆ ՋԳՈՐ|Գ ԿԱՑԾԱՊՈ|Ղ, ՑԱՂԱԻ|ԹՍ ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Արձանագրությունը մի քարի վրա է, որի կենտրոնում վեց թերթանի վարդյակ է, դրված է պատի մեջ գլխիվայր.*

*Վերաբերում է շինության ժամանակին։*

*179. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ. արտաքուստ. հարավային պատի մանր խաչերի շուրջն ու տակը գրված հիշատակագրություններ։*



ՔՍ. ԲԱՐԻՆ | ԽԱՉՍ ՈՎԱՆԷՍ | ԱԲԵՂԻՆ | Է. Թվ. ։Ջ։

*Լուսանկ. տախտ.* XVII, 58



180. Թվ. ։ՌՃԷ։ | Խ⌊Ա⌉ՉՍ ԲԱՐԷԽ⌊Ա⌉Ի⌊Ս⌉ ⌈ՇԱՀԲԷԿԻՆ | ⌈ԴԱՆՈՒՄԻՆ.



181. ԱԿՈԲ | ՊԱ|ՊԻ | ԳԻ⌊Ն⌉Ց.



182. Խ⌊Ա⌉ՉՍ | ԲԱՐ|ԷԽ⌊Ա⌉Ի⌊Ս⌉ | ՈՀԷ | ԷՐՑԻ.

*ՈՀԷ-անունը կարող է և ՈՀԱՆԷՍ կարդացվել*



183. ԽԱՉՍ ԲԱՐԷԽ⌊Ա⌉ԻՍ | ՃԻՎԱԻ ԽԱՆԻՆ.

*Լուսանկ. տախտ.* XVII, 65



184. ԽԱՉՍ ՓԱՇԱՅԻՆ.



185. ՍԲ ԽԱՉՍ | ԲԱՐԷԽԱՒՍ ԳՐ|ԻԳՈՐԻՆ, Խ⌊Ա⌉ՆԲ⌊Է⌉ԿԻՆ.



186. ՄԻ⌈ՐԻՃ⌊Ա⌉ՆԻ՛Ն... ԿՈ⌈Ղ⌊Ա⌉ԿՑԻՆ Խ⌊Ա⌉Թ⌊Ո⌉ՒՆԻ⌉Ն.



187. ՍԱՐԳԻՍ | ԻՐԻՑՈ | Է ԽԱՉ. Թվ...



188. ԵԻ ԹԱ ՄԱՐ | ՑԱՂլԱԻյԹՍ | ՅԻՇԵՑԷՔ.



189. ՄԱՆԿԻՆ ՑլԻյՇԵՑԷՔ Ի ՔՍ.



190. ԽԱՉՍ | ՆԱՆԻՆ.



191. ՍՔ ԽԱՉՍ ԴլՈԻյԼԲԷԿԻՆ.

192. ԱՌԸՍՏԱԿլԷյՍԻՆ, ԳԱԼՍՏԻՆ.

***193. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ, հարավային մուտքի արևելյան կողին. 5 տող.*



ՅԻՇԱՏԱԿ Է ՍՔ ՏԱՃԱՐԻՍ ԱԻԱՃԱՆՆ | ՇԱՀ-ՆԱՃԱՐԻ ԿՈՂԱԿԻՑ | ՎԱԳՈՒՆ. ԹՎ. ։ՌՃՂԱ։

*ՎԱԳՈՒՆ անունը գրչի սխալ է, պետք է լինի ՎԱՌՈՒՆ. տես հաջորդ արձանագրությունը.*

*Լուսանկ. տախտ.* XVII. 60.

***194. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.*** *արտաքուստ. հարավային մուտքի արևմտյան կողին. 6 տ.*



ՅԻՇԱՏԱԿ Է ՍՔ | ՏԱՃԱՐԻՍ ԽՈՐ|ՈՒՐԴԱՆՈՑ ՇԱՌ|ՆԱՃԱՐԻ ԿՈՂԱԿԻՑ | ՎԱՌՈՒՆ, ԻՒՐ ՈՐԴԻ | ՊԱՏԱԼԻՆ։

*ՇԱՌՆԱՃԱՐ գրչի սխալ է, տես նախորդ արձանագրությունը։*

*Ղաֆադարյան, Դ., 38.*
*Լուսանկ. տախտ.* XVII, 61

**195. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.** *արտաքուստ. հարավային մուտքի կամարակալ քարին. 3 տ.*



ՑԻՇԱՏԱԿ Է ՍՐ ՏԱՃԱՐԻՍ ՎԷՄՍ. ՆՈՐ[Է]ՔԵՑԱՆ ԲԱՐԽՈՒՏԱՐՆ,
ԻԻՐ ԿՈՂԱԿԻՑ ԹԱՃ[Ա]ՈՒՄՆ, ՈՐ ԳՆԴԻՍ ՆՈՐՕՔԻԼՆ ԹՎ. ։ՌՃՁՋ։

*Լալայան, Դ., 38.*

**196. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.** *բակում, եկեղեցու հարավային մուտքի մոտ, տապանաքարի վրա. 2 տ.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԱՂԱՄԻ ՈՐԴԻ ՏՐ |
ՊՈՂՈՍ[ԻՆ] ԹՎԻՆ. ։ՌՃԻԱ։

*Տապանաքարն այժմ շուռ տված է, տառերը գլխիվայր են։*

**197. ՏԵՂ. ԵԿԵՂԵՑԻ.** *բակում, եկեղեցու հարավային մուտքի մոտ, տապանաքարի վրա. 2 տ.*



ԵՍ ԱՌԱՔԵԼՍ ԿԱՆԿՆ[ԵՑԻ] ՏԱՊԱՆՍ |
ՀԱՒՐ ԻՄՈ ԱԲՐԱՀԱՄ ՔԱՀԱՆ[ԱՒՆ]։

**198. ՏԵՂ.** *Մելիք Բարխուդարյանների տան քարավորի վրա. արտաքուստ. 2 տող.*



ԹՎ. ։ՌՄԼԲ։ Ի ՎԱԵԼՈՒՄՆ. ՍԷԼԻՔ ԲԱՐԽՈՒԴԱՐԻ ՈՐԹԻ ԴԱՎԻԹ ՊԷԿՍ |
ՇԻՆԵՑԻ ԱՅՍ ԱՄԱՐԱԹՍ ԻԲՐԱՑԻՄ ԽԱՆԻ [ԺԱՄԱՆԱ]ԿՕՎՆ.

*Վերջին բառի մնացվածքները նոր են։*

*Լուսանկ. տախ.* XVII, 62

**199. ՏԵՂ.** *Մելիք Բարխուդարյանների տան մի այլ մասի քարավորի վրա. Թերի արձանագրություն.*



Ի ՎԱԵԼՈՒՄՆ ՇԻՆԵՑԻ.....

**200.** ՏԵՂ. գերեզմանատան հյուսիսային մասում. խաչքարի հյուսիսային կողին. 6 տող.



ԻՒ ԹՎ. ։ՈԿԵ։ | ՅԻՇԵԱՑ | ՔՍ. ԱԾ. ՁՄԼՔԱՇԱՀ
Ի ՔՈ ԱՐ|ՔԱՅՈՒԹԵ.

Մլքաշայ-Մելիքշահի ժողովրդական ձևն է. խաչքարը խրված է գետնի մեջ և թեքված դեպի արևմուտք, բայց իր տեղումն է։

Լուսանկ. տախտ. XVII, 62



**201.** ՏԵՂ. գերեզմանատան հյուսիսային մասում. խաչքարի ճակատին և թևերի տակ.

Ի ԹՎ. ։ՁԻԱ։ ԵՍ ՇԱ|ԱԲԵՐ ԵՒ ՇԱՀԾՄԱՅՐ
ԿԱՆԳՆԵՑԱՔ ՁՍԲ ԳԵՐԳՍ ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ.
ՅԻՇԵՑԷՔ.

Խաչքարը նախորդից արևելք է գտնվում, խրված գետնի մեջ և թեքված դեպի արևելք. բայց իր տեղումն է։

Լուսանկ. տախտ. XVIII, 63
(երկու մասից. տակից մի տող պակաս)

**202.** ՏԵՂ. գերեզմանատան հյուսիս արևելյան կողմում. խաչքարի և պատվանդանի վրա. 7 տ.



ԹՎ. ։ՁԻԲ։ ¦ ԵՍ ԽԱՐԻԲՇԱՀ ԿԱՆ|ԳՆԵՑԻ
ՁԽԱՉՍ ԵՒ ¦ ՁՀԱՆԳԻՍՏ ՄԱ|ԻՐ ԻՄՈՅ.
. . . . . ՅԱՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

Պատվանդանի վրա են վերջին 4 տողերը և խիստ եղծված. մոր անունը հավանաբար ՈՈՒԼԹԱՆՇԱՑ պիտի կարդալ։

Խաչքարի առաջ կա օրորոցաձև տապանաքար՝ առանց արձանագրության։

Լուսանկ. տախտ. XIX, 65

*203. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում. խաչքարի ճակատին. 3 տ.*



ԵՍ ԿՈՒՏՈՒԶՍ ԿԱՆԿՆԵՑԻ Զ|ԽԱԶՍ
ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ՊԱՇԱՐ|ԱԹԻՆ.
ՑԻՇԵՑԷՔ Ի ՔՍ.

*Խաչքարի առաջ կա տապանաքար մեկ տող բոլորովին եղծված արձանագրությամբ.*

*Լուսանկ. տախտ.* XVIII, 64

*204. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում, նախորդի հյուսիսից, խաչքարի ճակատին. 3 տող.*



ԵՍ ՊԱՇԱՐԱԹՍ Կ|Ա.Ն|ԿՆԵՑ.Ի ԶԽԱԶՍ ՀԱՒՐՆ
ԻՄՈՑ | ԱԲԷԼԻՆ ՑԻՇԱՏԱԿ. ԹՎ. :ՊՀ:

*Թվականը գրված է մանր տառերով, տեղ չլինելու պատճառով։*
*Առաջին կա տապանաքար բոլորովին եղծված արձանագրությամբ։*

*Լուսանկ. տախտ.* XIX, 66

*205. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում. նախորդից հյուսիս տապանաքարի վրա.*



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ԱՄՐԱՍԻՆ
ՀԷՐԵՆԱՑ | ՏԷՐ ԻՇԽԱՆ ԳԱՎԱՌԻՆ.
ԹՎ. :ՊՀԲ:

*Արձանագրությունը գրված է տապանաքարի հյուսիսային, արևմտյան և հարավային կողերին. սկիզբն արևմտյան կողից։*

*206. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում. խաչքարի ճակատին. 4 տ.*



ԵՍ ՇԱՊԱՆՍ ԿԱՆԿՆԵՑ|Ի ԶԽԱԶՍ ՄԱՒՐ ԻՄՈՑ |
ԱԼՄԱՍԻՆ ՑԻՇԵՑ|Է|Ք Ի ՔՍ. | ԹՎ. :ՋԻԴ:

*Բոլոր այս չորս արձանագրությունները №№ 203, 204, 205 և 206, միևնույն տոհմի անդամներին պատկանող հուշարձանների վրա են և իրարու մոտ.*

*Լուսանկարի վրա առաջին տողն է լավ երևում. մնացածները շուքի մեջ են։*

*Լուսանկ. տախտ.* XIX, 67

**207. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում. խաչքարի ճակատին. 4 տ.**



ԵՍ ՓԱՐԱՃԱՆ.... ԽՈՋԱ. ԿԱՆԿՆԵ|ՑԻ ՁԽԱՋԱ ՀԱՒՐ ՄԵՐ ՔԱՒՔԻՆ | ՄԵՋ ԻՇԱՏՍԿ. ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ | Ի ԹՎ. : ՋԲ:

*Խոջա բառից առաջ երեք տառը գուցե պիտի* Միր *կարդալ. ինչպես կա* Միրխան, Միր փաշա *և այլն։*

*Նույն* խոջա *բառի վրա քարը ճկռված է, այդ պատճառով էլ ոչ տառերը փոքր են գրված։*

**208. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում. վերոհիշյալ խաչքարի առաջի գերեզմանաքարի վրա.**



ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ՔԱՒՔԻՆ. | ՈՎ ՈՔ ԿԱՐԴԱ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑ[Է]Ք: ԹՎ. :ՋԲ:

*Առաջին բառի մեջ գրիչը սխալմամբ Ց-տառը առաջից է գրել։*

*Լուսանկ. տախտ.* XX, 68

**209. ՏԵՂ. գերեզմանատան արևմտյան մասում, նախորդների հյուսիսից կանգնած խաչքարի ճակատին. 3 տ.**



ԵՍ ՓԱՐՄԱՆԶ, Մ[Ա]Ր[Տ]ԻՐՈ[Ս], ՋԷՄՐ Կ[Ա]ՆԿ[Ն]ԵՑ[Ա]Ք ԽԱՋՍ ՀԱՒՐ ՄԵՐ ԱԼՍԱՆԻՆ ՄԱՒՐ ԱՄԽԱ|ԹՈՒՆԻՆ. ԻՇԵՑԷՔ Ի ՔՍ. ԹՎ. :ՋԲ;

*Այս երեք խաչքարերը, 207, 208, 209. միևնույն տոհմին են պատկանում.*

*Երկրորդ տողում գրիչը տառերը խառնել է. Վերջին անունը կարելի է* ՄԱՐԽԱԹՈՒՆ *կարդալ։*

*Լուսանկ. տախտ.* XX, 69

**210. ՏԵՂ. գերեզմանատուն.**



Տապանագիր՝

ԽԱՋՍ ԲԱՐԷԽԱՒՍ ՈՒՀԱՆԷՍ. ՎԱՍՆ ՔՍ. ԹՎ. :ՌԽԸ:

*Գերեզմանատան հարավային եզրին. հարավային կողին կենցաղային քանդակները։*



211. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐԱԹ[Ի] ՀԱՅՐ ՄԱՂՈՒԹԻՆ | ԹՎ. :ՌԾ:

*Նույնտեղ, հարավում կենցաղային տեսարաններ։*



212. ԹՎ. ։ՌՃԵ։ | ԱՅՍ Է ՀԱՆ|ԳԻՍՏ | ՂԱՐԱՄԻՆ.

*Նույնտեղ. հյուսիսային կողին հեծյալ հրացանակիր, երկու պարողներ, ալծ, հաց և գինու գավեր։*



213. ՑԻՇԱՏԱԿ Է ԼԱԼԻՆ. ԹՎ. ։ՌՃԵ։

*Գերեզմանատան հյուսիսային մասում։*



214. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՂԱՃԱՆ<sub></sub>Ի ՈՐԴԻ ԿՈՒՐ ԳԻՔՈՐԻՆ. ԹՎ. ։ՌՃ։

*Գերեզմանատան հարավային մասում։*



215. ԹՎ. ։ՌՃԴ։ | ԵՍ ՄԱԹՈՍ | ԿԱՆԳՆԵՑԻ | ՍԲ ԽԱՉՍ ՀՈԳՈՑՆ ԵՂԲԱՐ ՈՀԱՆԻՆ.

*Գերեզմանատան արևմտյան ծայրին. մեծ տապանաքար, օրորոցաձև, ագուցված մեծ շիրմաքարի մեջ, վրան որսի և խնջույքի տեսարաններ քանդակված։*



216. ԹՎ. ։ՌՃԻ։ | ԵՍ ՊԵՏՐՈՍ, ԷԼԻ|ԵԱՉՍ ԿԱՆԿՆԵՑԱՔ | ԽԱՉՍ ՀՈԳՈՑՆ ՄԱԹՈՍԻՆ;

*Գերեզմանատան արևմտյան ծայրին. տապանաքարի վրա ձիավոր, որսի կենդանիներ, պարողներ, հաց և գինու գավեր են քանդակված։*



217. ԱՅՍ Է ՏԱՊԱՆ Խ'ՄԱՀԻԼԻ ԿՈՂ|ԱԿԻՑ ԽԱՆՓԱՐՈՒՆ.

*Գերեզմանատան հյուսիսային եզրին.*



218. ՀՈԳԻՈՑ ՎԱՂԱԹԱՌԱՄ ՈՐ|ԴՈՑ ԻՄՈՑ ԴԱ|ՆԻԷԼԻՆ. ԹՎ. ։ՌՄԼ։-ԻՆ.

*Գերեզմանատան արևմտյան կողմում։ Որսի և խնջույքի տեսարան՝ հարավային կողին։*

*Լուսանկ. տախտ.* XX, 10

*219. ՏԵՂ. գյուղից 3 կիլոմետր հեռու, այգիների մեջ «Կոտրած եղցի» ավերակ եկեղեցու հարավային պատի տակի խաչքարի վրա. 3 տող.*




ԹԻՒՆ :ՉԻԶ: . . . . . .
ՋՀԱՅՐԻԿ . . . . . . .
ԵՍ ԱՂԱԻԹՍ . . . . .

*Լուսանկ. տախտ.* XX, 71

## ՎԵՐԻՆ ՇԵՆ

*Գտնվում է հնում Զագաձոր կոչված հովտի վերին մասում, Գորիսից 3 կիլոմետր դեպի հյուսիս։*

*Ստ. Օրբելյանի ցուցակների մեջ այդ անունով գյուղ հիշված է Աղահեճք գավառում, որը չի կարող նույնացվել սրա հետ, որովհետև այս հովիտը գտնվում էր Հաբանդ գավառի մեջ։*

*Վերին Շեն ձևը նախապես գործ է ածվել հասարակաբար, որպես որոշիչ, հետևաբար գյուղը պիտի ունենար նույն անունը, ինչ որ իրենից ներքևի գյուղն է ունեցել, իսկ ներքևում եղել են Զագաձոր և Գորայք գյուղերը (տես Գորիս), մինչև այժմ էլ երբեմն Վերին Շեն անվան փոխարեն գործածվում է հին Գորիս անունը, որից պիտի հետևցնել, որ սրա անունը ևս Գորայք—Գորիս է եղել (տես Գորիս)։*

*Վերին շենը նշանավոր է նրանով, որ նրա հյուսիսային սահմաններից են բխում Վարարակի աղբյուրները։ Այդ աղբյուրների ջուրը 932 թ. Սյունյաց եպիսկոպոս Հակոբը գնել էր Սյունիքի իշխան Փիլիպէից 12 հազար դրամով և մի թանկաժեք քարով, ջրանցքով՝ Շնհերի և Հալիձորի հանդերով՝ հասցրել մինչև Տաթևի վանքի կալվածները՝ Որոտանի ձախ ափին, Սատանի կամուրջի գլխին, նախապես Ցաքուտ կոչված վայրը, որն այնուհետև կոչվել է Վարդուտ*[1]*։*

*Մեր № 229 արձանագրությունից երևում է, որ ժամանակի ընթացքում ջրանցքը խանգարվել է, և 1294 թ. Տաթևի վանականներից Հովհաննեսը կրկին նորոգել է այն։ Այդ արձանագրությունը փորագրված է մի մեծ ժայռաբեկորի վրա, որը գտնվում է ջրանցքի և լեռնաշղթայի եզրին, այն վայրում, որտեղից ջրանցքը շուռ է գալիս դեպի Ուչ Թափաների հարթավայրը։*

*Ներկայումս արձանագրված քարի մոտ շինվել են հիդրոկայանի ջրընկեցի կառուցումները, և Վարարակի ջրերը թափվելով դեպի Զագաձորի հովիտը, էլեկտրական լույս են մատակարարում շրջակա գյուղերին։*

*Ծանոթության կարգով ասենք, որ ժայռաբեկորի վրա հայերեն արձանագրությունից վեր, կա երկու տող արաբերենի նմանող տառերով մի այլ արձանագրություն ևս, որը մինչև այժմ մնացել է անուշադիր։ Այդ արձանագրության գծագիրը և լուսանկարը մենք հանձնել ենք Լենինգրադի մասնագետներին, որոնց նախնական կարծիքն այն է, որ ուշ շրջանի—*VII *դ. պահլավերեն է։*

---

[1] Ստ. Օրբելյան, *254—56։*